

«ՏՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԼԵԶԱՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լեզվի ուսումնասիրությունը մարդու մտածողության և գիտակցության անուղղակի ուսումնասիրությունն է: Մարդու մտածողությունը ճանաչողական գործընթացների ամբողջություն է, որը միավորում է ճանաչողականությունը և լեզուն, որից հետևում է, որ լեզուն յուրահատուկ ճանաչողական գործընթաց է, իսկ լեզվի ճանաչողական գործառույթը կարևորագույններից մեկն է հաղորդակցման հետ մեկտեղ¹:

Ճանաչողական գիտության ուսումնասիրության հիմնական օբյեկտը լեզուն է, քանզի լեզվի ուսումնասիրությունը ճանաչողական ուսումնասիրության միջնորդավորված ուղի է: Լեզուն ճանաչողական գործընթացում կատարում է կարևոր համակարգողական գործառույթ. նրա օգնությամբ է որոշարկվում այն, թե ինչպես է մարդու գիտակցությունը տեսնում և ընկալում աշխարհը, և ինչպես է աշխարհը կարգայնացված նրա գիտակցության մեջ²:

Այստեղ օգնության է գալիս ճանաչողական լեզվաբանությունը՝ լեզվագիտության այն ճյուղը, որն ուսումնասիրում է լեզվի և գիտակցության փոխհարաբերության խնդիրները, լեզվի դերը աշխարհի կարգայնացման, ճանաչողական գործընթացների և մարդկային փորձի ընդհանրացման մեջ, ինչպես նաև՝ մարդու տարբեր ճանաչողական ունակությունների և լեզվի փոխազդեցության ձևերը: Ճանաչողական լեզվաբանությունը նպատակ ունի կադապարել աշխարհի լեզվական պատկերը, լեզվական գիտակցության կառուցվածքը³:

Հասկացությամբ՝ որպես ճանաչողական լեզվաբանության հիմնական միավոր, մեծ ուշադրության է արժանացել տարբեր լեզվաբանների կողմից և ստացել բազմաթիվ բնորոշումներ:

Լեզվաբանական տեսանկյունից հասկացությամբ բնորոշվում է որպես իմաստների համալիր, որով մարդը իրականացնում է իր մտածական-ճանաչո-

¹ Кизи́кович А., Горбач-Пазэра И. Современное состояние и перспективы когнитивной лингвистики // Русское слово в мировой культуре. Сб. докладов. - СПб., 2003, с. 243

² Кубрякова Е., Язык и знание: На пути получения знаний о языке.// Языки славянской культуры М., 2004. с.547

³ Маслова В. А, Когнитивная лингвистика: учеб. пособие, 3-е изд., Минск, 2008, с. 22

դական գործառույթը: Այն, տեղայնացված լինելով բառերի և արտալեզվական իրականության միջև, պայմանական մտային կառույց է, որն ունի զուտ ճանաչողական կարգավիճակ և գոյություն չունի մտածողությունից դուրս: Հասկացույթը մշակույթի տարրերի մտային արտապատկերումն է և պայմանավորված է մշակույթով:

Հասկացույթները միանման են մեկ լեզվի բոլոր օգտագործողների մոտ և իրենց ամբողջականությամբ ձևավորում են հասկացութային ոլորտը, և հասկացութային մակարդակում կատարվող զուգադրական ուսումնասիրությունների շնորհիվ հնարավոր է լավագույնս վեր հանել տարբեր լեզվամշակույթների տարբերություններն ու նմանությունները: Ընդհանուր առմամբ, հասկացույթը կարելի է սխեմատիկորեն պատկերել որպես՝ բազմիմաստ բառի իմաստաբանական դաշտ թափանցող և նրա համար լեզու հանդիսացող տարր:

Մշակութային հասկացույթը բազմաստիճան իմաստային կառույց է, որում առկա են հասկացական, պատկերային և արժեքային բաղադրիչները⁴: Հասկացույթը ընկալվում է որպես լեզվական նշանի *բովանդակության և արտահայտության պլանի* միավոր, որից հետևում է, որ այն՝ բացի առարկայական (հասկացական) և հոգեբանական (պատկերային և արժեքային) վերաբերությունից ներառում է նաև հաղորդակցական տեսանկյունից կարևոր ողջ տեղեկատվությունը⁵:

Տուճը, լինելով մարդու կողմից ստեղծված կենցաղային տարր (արտեֆակտ), դասվում է այն հասկացությունների շարքին, որոնք մասնակցում են աշխարհի տարածական կաղապարմանը: Ըստ Յու. Մ. Լոտմանի, ցանկացած մշակույթի համար՝ աշխարհի լեզվական պատկերի ստեղծման գործում՝ տարածության իմաստաբանության դերը եթե ոչ դոմինանտ, ապա կարևորագույններից է⁶, ուստի աշխարհի լեզվական պատկերի այդ հատվածը մեծ ուշադրության է արժանանում հատկապես լեզվաբանների կողմից:

Սեր ուսումնասիրության նպատակն է վեր հանել <<տուն>> հասկացության լեզվական ու մշակութային բաղադրիչները հայ և բրիտանական լեզվամշակույթներում:

Ե՛վ հայերենում, և՛ անգլերենում *տուն* հասկացության առնչվում է տեղի, մարդու սոցիալական կարգավիճակի և հոգեբանության հետ: Եվ քանի որ մարդկային մտածողությունն ու նրա գործընթացները, լայն առումով, ընդհա-

⁴ Карасик В., Языковой круг: личность, концепты, дискурс. М., Гнозис, 2004, с. 55

⁵ Бабушкин А. П., В., Когнитивная лингвистика, концепт. М., 1998, с. 12

⁶ Лотман Ю.М. Внутри мыслящих миров. Человек текст - семиосфера - история. - М.: «Языки русской культуры», 1999. с. 205

նուր են մարդկության համար, կարելի է նկատել, որ տարբեր ժողովուրդների միջև առկա լեզվամտածողական տարբերություններն ուղղակիորեն բխում են մշակութային տարբերություններից, որոնք էլ պայմանավորված են նրանց արժեհամակարգային յուրահատուկ ըմբռնումներով, պատմական փորձառությանը, հավատալիքների և պատկերների դասակարգման տարբեր եղանակներով⁷:

Պետք է նշել, որ *տուն* հասկացույթը հիմնականում ներկայացված է անգլերենում *house* և *home*, իսկ հայերենում՝ *տուն* և *օջախ* բառային միավորներով:

Ի տարբերություն հայերենի *տուն* և *օջախ* բառերի, որոնք կարող են փոխադարձաբար կիրառվել, անգլերենի *house* և *home* բառերը սերտորեն կապված են դարձվածաբանական միավորների համատեքստին: Սա կարելի է բնորոշել որպես երկու լեզուների լեզվամշակութային յուրահատկություն:

Տան գաղափարը և՛ բրիտանական, և՛ հայկական արժեհամակարգում առանցքային տեղերից մեկն է զբաղեցնում: Դա է վկայում անգլիական *My home is my castle* ասացվածքը, որը լավագույնս արտահայտում է տան, նրա անձեռմխելության, հանգստի և մեկուսի կյանքի (privacy) ապահովման բրիտանական արժևորումները, և հայերենի *հայրենի օջախ, հայրենի տուն, օջախի ծուխը/ կրակը վառ պահել* դարձվածային միավորները արտահայտում են հայկական արժեհամակարգի այնպիսի անքակտելի հատկանիշներ, ինչպիսիք են հայրենիքի, ընտանիքի, նախնիների հանդեպ նվիրվածությունը, գեմային մակարդակով պատմական հիշողությունը և արժանապատվությունը: Հայերենում *օջախ* հասկացույթը արատահայտում է նաև հայ մարդու հյուրընկալությունը (*դուռնբաց/դուռը բաց օջախ*), բարեկեցությունը (*չեն օջախ կամ օջախը չեն*):

Պետք է նշել, որ վերը նշված գրեթե բոլոր ընկալումներում զգացվում է տղամարդու անվերապահ գլխավորությունը, քանզի տան, օջախի շեն լինելը հայերը կապում են ընտանիքի գլխի՝ տղամարդու հետ, սակայն միևնույն ժամանակ չանտեսելով կնոջ դերը, օրինակ, *օջախի/տան սյուն (լինել)* (տղամարդ), *օջախի ծուխը/ կրակը վառ պահել* (տղամարդ, կին), *օջախը շենացնել/քանդել* (տղամարդ, կին), *տան գլուխ (head of the family)* (տղամարդ):

Անգլերենում *house-home* հակադրությունը ընկալվում է նաև վառ արտահայտված *տղամարդ-կին*՝ որպես *տանտեր – տան տիկին*, հակադրությամբ. *Men make houses, women make home*.

⁷ Smith A. Ethno-Symbolism and Nationalism: A Cultural Approach, Routledge, London, 2009, p. 29

Հետաքրքրական է, որ հայերենի *օջախ* և անգլերենի *home* բառերը ներկայացնում են *տուն* հասկացությո՞ւն ոչ միայն ֆիզիկական առումով, այլև առնչվում են տան ոգու, այնտեղ տիրող մթնոլորտի պատկերացումներին ու դրանց դարձվածային կիրառությունների ու կացարանի պատկանելության աղերսներին, որոնք առօրյա խոսքում դրսևորվում են բազում լեզվական կադապրներով և այսօր էլ առկա են հայկական և բրիտանական լեզվամշակություն՝ համեմվելով հասարակական և անհատական կեցության զնահատանքով:

More home than home, feel at home. East or West home is best. Home is home though it never be homely. Ուր ուզում ես գնա, տնից լավ տեղ չկա: Ոչ մի տեղ տան տեղ չի բռնում: Տան մթնոլորտը լավն է՝ վատն է:

Տուն հասկացությո՞ւր երկու մշակույթներում էլ զուգորդվում է ընտանիքի հետ, և *ընտանիք* իմակը առկա է հայերենի *տուն* և *օջախ*, իսկ անգլերենի՝ *home* բառային միավորների իմաստային դաշտում (*տնով-տեղով* - *with the whole family*): Դա լավագույնս արտահայտված է երկու լեզուների դարձվածներում. այն դեպքում, երբ անգլիացիները ասում են *broken home*՝ քայքայված ընտանիք, հայերը ասում են *տունը քանդ(վ)ել* :

Ի դեպ, եթե անգլերենի *home*—ը՝ *ընտանիք* իմաստով, կարող է լրացվել բացասական երանգ ունեցող բառերով և բառակապակցություններով (*a violent family*), ապա հայերենի *օջախը* հիմնականում ունի դրական լիցք (*լավ օջախից (դուրս եկած) լինել*, այն է՝ լավ ընտանիքից սերել):

"She came from a violent family" (OW) (Նա սերում էր *դաժան ընտանիքից* :)

Այս օջախի աղջիկը այս օջախի որդուն կվայելի, և այսքան ժամանակ ոչ մեկը իր բախտից չի խուսափել (ՄԳ):

Ընտանիք իմաստով կարող է օգտագործվել նաև *house* բառային միավորը, սակայն այս դեպքում այն ձեռք է բերում նաև <<գերդաստան>> հարանշանակությունը:

The *house* of Windsor was there, waiting for the dinner.

Վինծորների *ընտանիքը* (որը *գերդաստանը*) այնտեղ էր, սպասում էր ճաշին:

Հետաքրքիր է, որ երկու լեզվամշակույթներում էլ տանը վերագրվում է հզորացնելու, խիզախացնելու, արիացնելու հատկություն, սակայն այս դեպքում անգլերենի *home/house* և հայերենի *տուն/օջախ* բառերը կարող են փոխարինվել *door*, դուռ բառային միավորով՝ պահպանելով սակայն նույն իմաստը:

Every dog is a lion at *home*. Ամեն շուն իր տիրոջ դռանն է առյուծ զգում իրեն: Every dog is a valiant at his own *door*. Շունն իր *դռանը* անվախ է: Ամեն մարդ իր *տանն* է հզոր:

Անգլերենում *house* հասկացույթը ներառում է նաև *փակ լինելու* գաղափարը, որը սակայն դիտվում է որպես դրական հատկանիշ, քանզի փակ լինելը ապահովում է տան, ընտանիքի ներդաշնակությունը և ամբողջականությունը: Հետևաբար, տան *բաց լինելը* բացասական ընկալում ունի, քանզի այն զուգորդվում է դատարկության, աններդաշնակության և ընտանիքի ամբողջականության խախտման հետ: Այս հակադրությունը առավել վառ է երևում հետևյալ առածներում և ասացվածքներում.

If you don't live in the house, you don't know when it leaks. When the house is open, the honest man sins. There is a hole in the house.

Հայերենում տան *բաց լինելը* զուգորդվում է տան, ընտանիքի, տան տիրոջ հյուրընկալության, մեծահոգության հետ. *դուռնբաց/դուռը բաց օջախ*.

Պետք է նշել սակայն, որ հայերը, լինելով պատմականորեն առավել տանջված, փորձված ժողովուրդ, զգուշացնում են նաև ուրիշի առջև տան բաց լինելու չափավորության մասին: Այս դեպքում հայերն կարող են ասել. <<*Տանդ դուռը փակ պահիր, ուրիշին էլ գող մի անվանիր*>>:

Երկու լեզվաշնակություններում էլ՝ որպես տուն հասկացույթի *հասկացական բաղադրիչ* դիտարկվում է «իմը և ուրիշինը»-ի (свой-чужой) դիֆուստ-միայնի խնդիրը:

Բրիտանական ընկալմամբ հենց տան *փակ լինելն* է <<իր>> տարածքի ամբողջականության, ապահովության գրավականը, երբ այլոք՝ <<ուրիշները>>, փորձում են խախտել իր տան սահմանները:

Curiosity is ill manners in another's house. He that marries a widow and two children has three back doors to his house.

Տան հասկացույթի հայկական ընկալման մեջ «իմը և ուրիշինը» բաղադրիչը առավել բարեկամական ընկալում ունի:

Մի տնից չենք, մի հալի ենք: Իմ տունը ձեր տունն է:

Ուստի կարելի է միանգամայն բնական համարել լեզվական այն երևույթը, որ անգլերենում *home* բառային միավորը կարող է կիրառվել միայն *քո* սեփական տան մասին խոսելիս (*my home*, *բայց ոչ his/her/their/my brother's home*)՝ այլոց տունը անվանելով *house*, *place* և այլն:

Այս իմաստով հայերենում հավասարապես կարող են կիրառվել և՛ *տուն*, և՛ *օջախ* բառային միավորները (*իմ/մեր տունը*, *իմ/մեր օջախը*, *ձեր/նրանց/եղբորս տունը*, *ձեր/նրանց/եղբորս օջախը*):

Երկու լեզվամշակույթներում էլ որպես տան հասկացության պատկերային և զգայական բաղադրիչ կարելի է դիտարկել տանը <<մոտ-հեռու>> լինելու իմակը, որը հիմնականում արտահայտվում է <<ճանապարհ>> հասկացության միջոցով:

Far from home, near thy harm. There is no place like home. East, west, home's best. Go abroad and you'll hear news of home. Ուր ուզում ես գնա, տնից լավ տեղ չկա: Ուր էլ գնաս, քայլերդ/ոտքերդ միշտ էլ քեզ տուն են բերելու:

Ի դեպ, ճանապարհը օգնում է բացահայտել տան՝ որպես մարդու սուբյեկտիվ աշխարհի, էությունը, որտեղ հնարավոր են տարածության իրական ընկալման խախտումներ, տան հանդեպ ունեցած մարդու զգացումները, և այլն:

The longest road is sometimes the shortest way home. The longer the path, the sweeter the way home. Միշտ էլ քաղդք է տան ճանապարհը:

Եթե մարդը լքում է տունը, տանից հեռու է, ապա խախտվում է տունը, տան ու ընտանիքի ամբողջականությունը:

He that would be well needs not go from his own house. Որդիս տուն գա, օջախս չեն պահի/չենացնի: (ՄԳ)

Պետք է նշել նաև, որ երկու մշակույթներում էլ տանից հեռու գտնվելը ունի բացասական ընկալում, զնահատական:

Many go out for wool and come home shorn. Տանից/տեղից կտրված լինել:

Երկու լեզվամշակույթներում տան հասկացության արժեքային բաղադրիչը մարդն է, նրա զգայական ներաշխարհը, մտավոր կարողությունները, բնավորությունը, սովորությունները, բարեկեցությունը, հոգեվիճակը (երջանկություն, դժբախտություն, հանգստություն, անհանգստություն և այլն): Այդ կենտրոնական գաղափարը, ընդհանուր առմամբ, արտահայտվում է անգլերենի *home* և հայերենի տուն/օջախ բառային միավորներով:

Go where he will, a wise man is always at home. (մտավոր ունակություն, խելամտություն)

Home is where the heart is. (զգայական ներաշխարհ)

She felt completely *at home* on the stage. (SM) (հոգեվիճակ) (հանգստություն, վստահություն)

Որտեղ հաց,¹ էնտեղ կաց: (Տունը այնտեղ է, որտեղ հաց, ապրուստի միջոց կա:)(սոցիալական կարգավիճակ, բարեկեցություն)

Տունը սև կապել (դժբախտանալ) (հոգեվիճակ)

Սուտ ասողի տունը հրդեհ է ընկնում, չեն հավատում: (բնավորություն)

Պետք է նշել նաև, որ և հայ, և բրիտանական լեզվամշակույթում տուն հասկացույթը զուգորդվում է *հայրենիք* հասկացույթի հետ: Ղա առավել ցայտուն է արտահայտվում հատկապես գեղարվեստական խոսքում:

Having troubles at *home* she left it and made London her home. (SM)

...Վաղուց իր մայր Արաքսն անցել, որպես ծովով իր լացի,

Բանդումահու կիրճն էլ անցավ, քանզի ծի էր հեծել, ծի,

Ձին մուրազի կեսն է, իրավ, այս անմուրազ աշխարհում,

Ու յոթ գիշեր ճամփա կտրեց՝ դեպի Սիփան, դեպի *տուն*,

Խելահեղված հասավ Բինգյոլ ու խթանեց նժույգին:(ՀՀ)

Տուն հասկացույթն ուսումնասիրելիս կարելի նկատել, որ տարբերություներ կա նաև նրա տարածքային ընկալման մեջ: Բրիտանական մշակույթում *home*-ը և *house*-ը հիմնականում ընկալվում է որպես տարածապես մեծ, ընդհարձակ տարածք, որոնցից *home*-ը հիմնականում բնակելի տարածք է, իսկ *house*-ը ունի նաև վարչարարական, հատուկ նշանակության տարածք իմաստը: Տվյալ դեպքում *home* և *house* բառերին հայերենում կարող են համապատասխանել տարբեր բառային միավորներ:

My home is my castle. Իմ տունն իմ ամրոցն է:

Home office -Ներքին գործերի նախարարություն

old people(s) home - ծերանոց

social-care home -սոցիալական խնամքի կենտրոն/տուն

alms/ poor house - աղքատների ապաստարան. անկեղանոց՝

աղքատանոց

House of Commons -Համայնքների պալատ (Բրիտանիայի պառլամենտի ստորին պալատը).

House of Lords -Լորդերի պալատ (Բրիտանիայի պառլամենտի վերին պալատը).

Upper House- Վերին պալատ (Անգլիայում՝ Լորդերի պալատը, ԱՄՆ-ում՝ սենատը):

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ անգլերենի *house*-ը առավելապես արտահացույթում է իրական աշխարհը, այն տեղը, որտեղ մարդը ապրում է որպես հասարակության անդամ, որը որոշակի բարոյական սկզբունքների, հասարակական օրենքների միջոցով ազդում է մարդու վարքի վրա և կանոնակարգում մարդու ընտանեկան հարաբերությունները: Մինչդեռ, *home* հասկացույթի համար կենտրոնական գաղափար է մարդ՝որպես անձ, անհատ: *Home*-ը այն տեղն է, որտեղ մարդը զգում է իրեն ազատ, անկաշկանդ, «ինչպես տանը», և այն կազմավորվում և կարգայանաց-

վում է միայն մարդու գիտակցության մեջ: Այս առումով հայերենի տուն և օջախ բառային միավորները հիմնականում հավասարազոր են, կարող են փոխադարձաբար կիրառվել և հավասարապես են ներկայացնում տուն հասկացույթը:

Ամփոփելով, պետք է նշել, որ եթե տուն, օջախ հասկացույթների հայկական ավանդական մեկնաբանությունները, նախևառաջ, առնչվում են բարեկեցության, լիության, համախմբվածության, հյուրընկալության ընտանիքում տղամարդու գերակայության հետ՝ ապա բրիտանական ընկալմամբ՝ տունը անձի առանձնության, ապահովության և անձեռնմխելիության կարծրատիպային գաղափարների մարմնացումն է:

Հայերենի տուն/օջախ և անգլերենի house /home_հասկացույթի լեզվական արտահայտությունները աչքի են ընկնում իմաստային ու նշանային կիրառությունների լայն դաշտով: Այդ կիրառություններում, մասնավորապես բացահայտվում է այն իրողությունը, որ տան ավանդական ընկալումը բրիտանական և հայ հասարակության սոցիալական սանդղակներում ունի տարբեր արժեքներ:

Այսպիսով, տուն հասկացույթի բրիտանական և հայկական ընկալման տարբերությունները հիմնականում բացատրվում են տարածքային ընդգրկման արմատական տարբերություններով՝ բրիտանական աշխարհագրության կայունությամբ և հայկականի հարափոփոխ բնույթով:

THE CROSS-LINGUISTIC AND CROSS-CULTURAL CHARACTERISTICS OF THE CONCEPT 'HOUSE/HOME' IN ENGLISH AND ARMENIAN

The article aims at investigating the linguo-cultural peculiarities of the concept *house/home* in English and Armenian. The concept '*house/home*' is of particular interest as it is among the universal concepts and has the same reference but sometimes different significance and perception in different languages.

The conceptual differences between languages are evident if we compare the relatively small number of semantic primes with the number of culture-specific words, words that reflect and embody the distinctive historical and cultural experiences of a speech community.